



“ՓՈՂ ՏՈՒՔ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” 1904 ՝ ԵՐ 16.


ՀԱՏՈՐ ԻԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1892

ԹԻՒ 3

ՆԱԻԱՍՏԻ ՏՂԱՆ

Պատկերաց այս կոյտը կը ցուցնէ նաւաստի տղայի մը պատմութիւնը : Երբ նա փոքր էր՝ իւր սիրելի զբաղումն էր զբօսնուլ խաղալիկ նաւակներով ծովուն եղերքը : Երբ տան մէջ կը գտնուէր, իւր խորհուրդները շատ անգամ կը պտըտէին ծովուն վրայ, այնպէս որ կը մտնար իւր կաթի գաւաթը, և չէր բեր իւր մօր իրեն համար կարգացած բաները : Եւ ոչ մէկ բան այնքան հաճոյք կու տար անոր՝ որքան դիտել պատերազմական նաւ մը, մանաւանդ եթէ, ինչպէս կը տեսնենք մեծագոյն պատկերին մէջ, գտնէր նաւային սպայ մը պատրաստ նախնկարագրութիւնն ընել անոր, և ըսել ծովու պատմութիւններ : Զարմանք չէ ուրեմն որ նա երբ բաւական կը մեծնայ, կ'երթայ ծով, որոյ վրայ էին իւր մտածութիւնները և փափաքները այնքան ժամանակէ հետէ :



ՆԱԻԱՍՏԻ ՏՂԱՆ

ԶՍՊԵՏԷՔ ՎԱԳՐԸ

Տր. Սթիֆըն Հ. Թինկ ունէր մեծ հիւրանոցի տղայ գարոց մը, և ինքն էր մանկանց զարմանալի քարոզիչ :

Անգամ մը երբ կ'ընէր մանկանց բանաստեղծութիւն մը, ստախօսը նմանցուց թունաւոր օձի, թեթեալարոյ տղան՝ կապիկի որ կ'ընէ միմտութիւններ և ծաղրածութիւններ, սնապարծ մանուկը՝ սիրամարդի որ կը տարածէ իւր փետուրները որպէս զի տեսնողներն զմայլին, և բարկացած մանուկը՝ կատաղի և անզուսպ վազրի : Երբ բա-

նաստեղծութիւնն աւարտեցաւ, երգ մը առաջարկեց : Մանկունքը տով չպատրաստուեցան, և սկսան երգել չիփթ և անկարգ կերպով : Յանկարծ իւր երեսը կարմրեցաւ : Գրասեղանին ամուր մը զարկաւ իւր զիրքով, և անհամբերութեամբ գոչեց բարձրաձայն : Սրահին ետեի կողմը գտնուող փոքրիկ աղջիկ մը որ կանգնած էր նստարանի մը վրայ



ԱՆՅ

և ապա՛ մնացած էր քարոզչին պերճաստեղծեան սաստկութենէն, իւր մասն ուղղեց անոր և պուռաց մանկական ձայնով, բայց սրահին մէջ բոլոր գտնուողներէն լուռելու չափ բարձր, “վա՛հր” իսկոյն լռութիւն մը տիրեց սենեկին մէջ : Տր. Թինկ վար դրա-

իւր գիրքը, ինչնելով բեռն յառաջ  
քալելոց, եկաւ և իւր բազկաց վրայ ա-  
ռաւ փոքրիկ աղջիկը որ կը դողար եր-  
կիւղէն, հանդարտեցողոց զնա իւր քաղցր  
ժպիտով, ետ դարձաւ բեմը, և  
չոյելով զնա ըսաւ մոնկանց, «Այո,  
ճշմարիտ խօսեցաւ աղջիկը: Բոլոր կե-  
նացս մէջ իմ թշուաճիս եղած է ներս  
բռնուող Լուսն: Սաստիկ մտքուած եմ  
վանդակի մէջ արդեւելու համար զայն:  
Երբեմն երբեմն կ'արձակուի վանդա-  
կէն իմ կամքիս հակառակ, և ետ այս-  
պիսի սաստիկ պատերազմ մը ունենա-  
լուս համար է որ կ'ուզեմ որ դուք,  
աղայք, շուրտ ձեր ներսը գտնուող  
Լուսն մինչ տակաւին մատաղահասակ  
էք:»


դարձակ և բնորոշ նախահանդիստ մը  
որ կը բաժնուի երկու մտածոց: Թոտ-  
րին նախահանդիստը քաղաքէն տասն  
և մէկ մղոն վարն է. և այս նաւա-  
հանդատին մէջ գտնուած կղզոյ մը  
վրայ է ֆուինսթաուն կոչուած փոքրիկ  
քաղաքը: Լիվրփուլէ Ամերիկա գնա-  
ցող շող ենուք կը հանդիպին Քուինս-  
թաուն ընդունելու համար թղթատա-  
րական վերջին պայուսակները: Օրի-  
նակի համար, կոստանդնուպոլսէ Ա-  
մերիկա զրկուած նամակ մը կրնայ ուշ  
մնացած ըլլալ Լիվրփուլ հասնելու,  
այնպէս որ շող ենուան արդէն ճամբայ  
էրած ըլլայ: Ուստի կը զրկուի ճեպարն-  
թաց կառախուսմով Լոնտոնէ, Անգ-  
ղիոյ և Ուէլլի ճամբով, և յետոյ շո-  
ղ ենուով Սուրբ Գէորգայ շրանցին մէկ

կէցաւ այն տեղը ուր ընդունած էր  
տուակը: Վերջապէս աղնուականը դիպ-  
ուածով նորէն անցաւ անկէ: Տշան  
մտեցաւ անոր և ստակին մնացորդը  
դրաւ անոր ձեռաց մէջ համբելով  
մեծ ճշդութեամբ: Աղնուականն այն-  
քան հաճոյք զգաց տղային հաւատար-  
մութենէն որ դպրոց դրաւ զնա, և  
խոտաացաւ հոգ տանել անոր ապա-  
գային համար ալ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՏԱԿ ՄԸ

Սկիւտներէն (սինթա) շատը եր-  
կու կամ աւելի ամբարանոց կ'ու-  
նենան: Ուուտ, Անգղիացի բնախօսը,  
կը պատմէ թէ իւր մէկ բարեկամը  
գտած էր այս ծածուկ ամբարանոց-  
ներէն մին զոր սկիւտ մը պատրաս-  
տած էր պէտքի ատեն անոր դի-  
մելու համար: Նա անխոհեմութեան  
վայրկենի մը ատեն մտածած էր  
կատակ մը ընել սկիւտին: Անոր  
հաւաքած կաղիններն առաւ և  
անոնց տեղ դրաւ զնդած և քա-  
րեր, խնամով անյայտացունելով  
իւր այցելութեան բոլոր նշաննե-  
րը: Չմտաւ ան ջուրս որ մը ան-  
ցաւ այն տեղէն և տեսաւ որ սկիւ-  
տը քիչ մը առաջ հանդիպած էր  
հոն: Չայս գիտցաւ սա իրողու-  
թեամբ որ տասն մասնաշափ ձիւն  
բերուած էր ծակին բերնին շուր-  
ջը, և քարերն աստ անդ նետ-  
ուած էին յուսահատեալ անաս-  
նոյն ձեռամբ:

Այս բանը մեծ վիշտ տուաւ կա-  
տակն ընողին, որ ստպէս խօսե-  
ցաւ. «Ես իմ բոլոր կենացս մէջ  
այսքան զգացած չէի գործնական կա-  
տակի մը յիմարութիւնը: Երևակայե-  
ցէք այն խեղճ, փոքրիկ կենդանին  
նիհարացած՝ ջրտէն և ուտելիքի նե-  
ղութիւն կրելէն, բայց որ նախատե-  
սելով երկար ձմեռ մը, որոշած է բա-  
ւեցունել իւր սակաւ պարէնը որչափ  
կարելի է երկար ատեն: Երևակայե-  
ցէք թէ ի վերջոյ կու գայ կը բանայ  
իւր այս ամբարանոցը թերևս մնացած  
մի միայն ամբարանոցը, և ուրախու-  
թեամբ մէկ կողմ կը քերէ ձիւնը, կա-  
տարելապէս վստահ թէ լաւ ուտեստ  
կը սպասէ հոն իրեն իբրև վարձ իւր  
հոգածու աշխատութեան. բայց այս  
ամէն բաներէն ետքը չգտնե՞ր ուրիշ բան  
ոյլ միայն՝ քարեր: Ես բոլոր կենացս մէջ  
երբեք չզգացի զիս աւելի նուաստա-  
ցած և ամեթահար. և իրաւ որ տակի մը  
կու տայի եթէ ոք տեղեկացունէր ինձ  
թէ ո՛ւր կը գտնուէր այդ անիրաւեալ



ԳՈՐԾ

ԳՈՐԾ

Գործ, իւրանտայի երրորդ քաղա-  
քը, խորհրդարանին մէջ իւր ներկա-  
յացուցին ունէր զփարնէլ մինչև ա-  
նոր մահը: Մտա է Տի գետոյ բերնին:  
Այս գետը ճիշդ քաղաքէն վերը կը  
բաժնուի երկու ճիւղերու: Քաղաքին  
մէկ մասը յիշեալ ճիւղերուն մէջտեղ  
գտնուող կղզոյն վրայ է, և անկէ  
անդին գետոյն հիւսիսային և հարա-  
ւային կողմերը կը տարածի: Մին այն  
վեց չքնաղ կամուրջներէն, որ իրա-  
րու կը կցեն քաղաքին այլ և այլ մա-  
սերը, կը կոչուի փարնէլ կամուրջ: Իւ-  
րանտա ունի երեք գոլէճ, որք ամէնքն  
ալ կը կոչուին Քուինս (Թագուհոյն)  
Գոլէճ. կը գտնուին իւրանտայի զա-  
նազան քաղաքացի մէջ և կը համարուին  
ճիւղեր Արքայական Համարարանի ի  
Տրպլին: Այս գոլէճներէն մին կը գրա-  
նուի ի Գործ: Սոյն քաղաք ունի ըն-

նեղ մասէն՝ իւրանտա, և ուրիշ կա-  
ռախուսք մը արագ արագ կը հասցու-  
նէ զայն ֆուինսթաունէ:

ՀԱՆԱՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՊ

Քանի մը տարի առաջ երբ աղնուա-  
կան մը կը ճանապարհորդէր ի Սկոտ-  
տիա, Էտինպուրիի փողոցներէն մէ-  
կուն մէջ հանդիպեցաւ փոքրիկ և  
ցնցոտիներ հագած տղայի մը որ ողոր-  
մութիւն խնդրեց անկէ: Աղնուականն  
ըսաւ թէ մանր ստակ չունէր, որում  
պատասխանեց տղան թէ ինք կրնար  
մանրցունել ստակը: Աղնուականը տղա-  
յէն պրծելու համար տուաւ անոր ար-  
ծաթ ստակ մը, զոր տղան կարծելով  
թէ մանրցունելու համար տուաւ ի-  
րեն, վազեց զնաց այդ նպատակաւ:  
Երբ ետ դարձաւ, չգտնելով հոն իւր  
բարերարը որ կ'ակնկալէր թէ հոն պի-  
տի սպասէր, քանի մը օրեր զնաց

սփիւռը : Այնքան շատ կաղնիներու մթերք մը պիտի նուիրէի անոր՝ որ երբեք ուտելիքի կարօտութիւն պիտի չբաշխէր թէպէտ Մաթուաղայի չափ երկար ապրէր :

ՍԵՐ ՌՈՒԹԵՐ ՌԱԼԷ

Քորքէ քսանկից մըն հեռին կը գտնուի տուն մը որ ժամանակաւ էր բնակարանն Սըր Ուոլթըր Ռալէի, այն հոշակաւոր Անգղիացոյն որ ապրեցաւ ասկէ 300 տարի առաջ : Սոյն տան մէջ հիւրընկալեց նա էտմընտ Սփէնսըրը, մին Անգղիոյ մեծագոյն բանաստեղծից : Ռալէ համբաւաւոր էր իբրև զինուորական, իբրև մատենագիր և իբրև ազգեցիկ անձ արքունեաց մէջ : Նորա բարձրագոյն համբաւը ծագում առաւ Սպանիոյ դէմ մղած ծովային պատերազմաց մէջ ստացած յաջողութենէն և իւր երկրախուզական ճանապարհորդութիւններէն : Նա էր որ Ամերիկայէ բերաւ ֆալֆուրը, և իւր տան պարտիպին մէջ անկեց առաջին ֆալֆուրը, զի այս բոյսը դեռ մշակուած չէր յիշխնտա : Ամերիկայէ բերաւ նաև ծխախոտը . և բոլոր ծխողք պարտին յիշել զՌալէն չենք ըսեր թէ ինչ զգացմամբ : Ռալէի վախճանն եղաւ ցաւալի : Մահուան դատապարտուեցաւ և գլխատուեցաւ Անգղիոյ ճէյմս Ա. թագաւորին հրամանաւ : Երբեմն լսեցինք տղայոց վիճաբանութեան ընկերութեան մը մէջ հակաճառութիւն սա խնդրոյն վրայ թէ Սըր Ուոլթըր Ռալէի գլխատումը կրնա՞ր արգարանալ արդեօք : Հաստատական (Այո՛ ըսող) կողմը գրտնուողներէն մին ըսաւ, կատակի ձեւով, թէ նա արժանի էր մահուան, ծխախոտը յերոպպա բերելուն համար : Այս խիստ պատիժ մը պիտի ըլլար . և Ռալէի գլխատումը բոլորովին տարբեր պատճառաւ էր : Բայց և այնպէս մենք կը կարծենք թէ աշխարհի այս կիսագունտն աւելի աղէկ վիճակ պիտի ունենար եթէ ծխախոտը երբեք չանցնէր Ովիանտին այս կողմը :


ՓՈՒՔՐԻԿ ԱՂՋԱԿՆ ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Հետագայ ճշմարիտ պատմութիւնը կ'ընէ Էմիլի Շոր անուն հեղինակուհի մը .

Մեզ դրացի փոքրիկ աղջիկ մը որ մը կը խաղար տանն առջև, և ահա կին մը երեցաւ և խնդրեց քանի մը դրամ : Կինն իւր բազկաց մէջ ունէր փոքրիկ մանուկ մը . աղջիկն այնքան սիրեց այդ փոքրիկը որ ըսաւ կնոջը

թէ զայն կը ծախէր իրեն : «Ինչ կուտաս անոր փոխարէն, օրիորդ,» հարցուց կինը : «Տանկահինգ դահեկան :» «Շատ լաւ,» ըսաւ կինը, «տեսնենք ստակը :» Սակարկութիւնն եղաւ . աղջիկը տուաւ օտակը, առաւ մանուկը, տարաւ քոյն սանդուղէն վեր և դրաւ իւր անկողնին վրայ . ժամանակ մը զայն սիրելէն ետքը վար վազեց սանդուղէն և կանչեց իւր մայրն ըսելով, «Մայրիկ, մայրիկ, ես ողջ պատճառապատանք մը ունիմ, միշտ կ'ուզէի ունենալ հատ մը, և ահա ստացայ :» Մանուկը կը կենար հոն, և աղջիկը պարզմտութեամբ կը պատմէր թէ ինչպէս ձեռք բերած էր զայն : Մուրացիկ կինը փնտուռեցաւ բոլոր քաղաքին մէջ, սակայն անոր հետքը կարելի չեղաւ գտնել : Նոյն ժամանակ մանկան փոքրիկ տե-

նակ կը կրկնէր այս բաները : Մարդք թողլով իւր ձին գնաց հոն, և տեսաւ որ իւր փոքրիկ դուստրը նստած էր քարի մը վրայ, շունն ալ իւր պոչը կը շարժէր և պահպանութիւն կ'ընէր անոր քով : Սպիտակ ձեան վրայ որալ կը տեսնուէին անտոնց ասոյց հետքերը և քայած ճամբան . և երբ ժողովն այդ հետքերուն հետեւելով գնաց ետ, տեսաւ որ փոքրիկը քանի մը անգամ քայած էր արօտին մէջ գտնուած բաց ջրհորի մը շուրջը : Մանկիկին կօշիկներուն նշանները շատ մտաւ էին ջրհորին եղերքին, բայց աւելի մտաւ էին շան ասոյց նշանները, որ յայտնի էր թէ մտած էր փոքրիկ աղջկան և ջրհորին մէջտեղը : արկ չէ բսել թէ ինչ զգացում ունեցաւ հողորդ երբ տեսաւ հաւատարմութիւնն այն անբան կենդանւոյն որ



ՍԵՐ ՌՈՒԹԵՐ ՌԱԼԷ ԲՆԱԿԱՆՈՒՄ

րը այնքան սաստիկ կը թախանձէր պահել զայն, որ ծնողքը հաւանեցան, և այն ողջ պատճառապատանքն եղաւ տանն օրհնութիւնը :

ՄԱՆԿԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԸ

Շատ չընքեր, Ամերիկացի մը հովուի շուն մը ստացաւ : Շունը իւր տեսակին բնութեան բերմամբ շուտով ընտելացաւ բնտանեաց անդամներուն, և մասնաւոր պատասխանատուութիւն առաւ իւր վրայ նկատմամբ տան փոքրիկ մանկան որ էր երեք տարեկան աղջիկ մը : Նոյեմբերի մէջ օր մը մանկան հայրը կը դառնար ձիով պրտոյտ մը . երբ մտեցաւ տանը, տեսաւ որ շունը կը գտնուէր արօտի մը մէջ որ ճամբայէն կը դատուէր քարէ պատով մը : Այս պատին ետեւէն շունը վեր կը ցատկէր, կը հաչէր և յետոյ նորէն վար կը ցատկէր . շարու-

քայած էր մանկան և ջրհորին մէջտեղէն, որոյ մէջ իյնալով նա կրնար ստակալի մահով մեռնիլ :

ՍՈՒԼՄԱՆ ՀՈՐ

Ամերիկեան Նիւ Եորք նահանգին մէջ Մեծ Չոր կոչուած քաղաքը կը գտնուի շահեկան հետաքրքրաշարժ բան մը որ ծանօթ է «Սուլման հոր» անունով : Գնդապետ Ուէսլի Ֆլինթի արտին մէջ է այն, զոր փորած է գնդապետին հայրը իբր քառասուն և հինգ տարի առաջ քառասուն և հինգ ոտք խորութեամբ, և մէջը ջուր չհաւաքուելուն պատճառաւ երեւի վրայ թողուեցաւ :

Ժամանակ մը յետոյ դիտուեցաւ որ ողւայ զօրաւոր հասանք մը կը մտնէր հորին մէջ և կ'ելլէր անկէ, և ուտի մէկ և երեք քառորդ մասնաչափ մեծութեամբ ծակ մը ունեցող տա-

փակ քար մը դրուեցաւ անոր վրայ : Այս ծակին մէջ զետեղուեցաւ սուրի գործի մը որ իւր ձայնը կը փոխէր օդոյն վեր եւ վար մղուեցուն համեմատ : Եւ շուտով հասկցուեցաւ որ այն կրնար ծառայել իբրև փոփոխութեան րաչափ օդոյ : Երբ օդը չէր փոփոխուած, սուրման ձայն չէր լսուեր, բայց փոթորիկ մը գալէն առաջ անոր մտնելու կը ծանուցուէր սուրման ազդարար ճիշտը, վասն զի օդը հորէն դուրս կը խուժէր : Երբ փոթորիկը կ'անցնէր և պարզ օդը կը յաջորդէր, օդոյն հոսանքին ուղղութիւնը կը փոխուէր և կը մղուէր դէպ ի հորին մէջ, և հաստատորիմ սուրիչը կ'իմացունէր զայս՝ իւր ձայնը փոխելով : Սուրիչ գործին մաշած է երկար ժամանակէ հետէ, բայց հորը տակաւին կը գուշակէ օդոյն փոփոխութիւնները անոնց որք կը հասնան օդոյն փոփոխուող հոսանքը նշանակութիւնը : Անձրեւային օդոյ ժամանակ սրկեալ ջրոյ հոսանք մը դէպ ի վեր կը խուժէ ծակին մէջէն :

ՉՄԵՌՆԱՅԻՆ ՁԲՕՍԱՆՔՆԵՐ

Այս պատկերը քիչ մը ուշ մնացած պիտի թուի մեր մանկահասակ ընթերցողներէն շատերուն . բայց ի կարին և քանի մը ուրիշ տեղեաց մէջ տակաւին բաւական ձիւն կը մնայ Մարտ ամսուն, շինելու համար ձիւնեղէն ամբողջներ, կամ բլրէն վար գլորելու համար ահագին ձիւնագնտակ, ինչպէս որ այս աղայք կ'ընեն : Ինչ զուարճալի դրօսանք : Անոնք կրնան պրօպագանդա գործը բոլոր իրենց ուժովը, և որովհետեւ գիւղէն դուրս կը գտնուին, ոչ ոք պիտի արգելէ զանոնք : Երբունի անձինք շատ անգամ կը հառաչեն երբ կը տեսնեն ձեան իջնելը երկրիս վրայ, բայց երբեք չենք կրնար ըսել թէ առողջ աղայ մը չորախանար երբ առաւօտուն արթնցած ժամանակը կը տեսնէ որ ամպերը ճերմակ վերաբերու մը գործած են երկրիս համար : Ինչ աղուոր բան է մանկահասակ ըլլալ :

Ընցնիք անգամ մը որ ձերունի մը բաւ նորատի անձանց թէ «Մանկական հասակը մեծ դրամադրուի է :»

ՏՐ. ՄԱՔ ԼԱՌՏ ԵՒ ՏՂԱՆ

Տր. Մաք Լաուտ անուն երևելի քաղաքի կիրակի օր մը պաշտօն կատարել կ'երթար կրակոյ քաղաքին մէջ փոքր գիւղի եկեղեցին : Կը քայլէր դարբարակեղ ճամբաներէն, մտիկ կ'ընէր թռչնոց քաղցր երգերը, միանգամայն կը դիտէր պարտէզները և մարգագետինները որք հարուստ էին պտուղներով և ցորենով : Նորա սիրտը կը լցուէր ուրախութեամբ և երախտազ խոտ թեմբոր աշխարհս այսպէս ի է գեղեցիկ առարկաներով և տեսարաններով : Բայց ահա յանկարծ նորա խաղաղ և հաճոյական խորհուրդները խանդարեցան հարուածի ձայներէ,

ճիչերէ և խորհուրդներէ, և երբ նա յեցաւ ցանկապատէն անդին, տեսաւ ծերունի կին մը որ կը զարնէր մատակ խողի մը որ կը մերժէր դուրս ելլել առուոյսի (հանգ) արտէն :


Խողը չորս կողմ կը դառնար մի և նոյն տեղը, և ձերունի կինը խիստ բարկացած անոր վրայ յարձակեցաւ ստակալի բիւր մը իւր ձեռքն առած և ճշելով, «Սատանան տանի զքեզ :» Բարի տղթորը յիշելով որ խեղճ խողերը արդէն սերտ ծանօթութիւն ունէին խաւարի իշխանին հետ՝ առաջուց անոր այցելութիւնն ընդունած ըլլալով, ծիծաղեցաւ և շարունակեց իւր ճամբան :

Երբ եկեղեցոյն մտնեցաւ, պատահեցաւ ուրիշ ծերունի կնոջ մը որ կը ծեծէր փոքրիկ աղայ մը, և ահա լսեց որ այս կինն ևս կ'աղաղակէր կատաղութեամբ, «Սատանան տանի զքեզ :» Բայց ուրիշ ինչոր էր այս : Եւ ոչ մի

մը և տղթորին ընչատուփին (հանգ) հետ զոր բանալու գաղտնիքը գտնելու համար իւր բոլոր ջանքերն ի դերու ելան, թէպէտ մէկ երկու զուարճալի թեթիւ փունդիւնք ցուցին թէ նա բոլոր կարողութեամբ աշխատած էր սուրման պարունակութեան ճաշակն առնուլ :

ՓՈՔՐԻԿ ՓԻՂԸ

Խեղճ փոքրիկ փիղ : Իւր գլխուն անգուծ հարուած մը ընդունած էր : Եւ անշուշտ կը մեռնէր եթէ վերքը չը դարմանուէր : Բայց կենդանին իւր կրած ցաւէն և երկիւղէն այնպէս կատաղած էր որ չէր թողուր վերաբուժին մօտենալ իրեն : Ինչ ընելու էր : Փղպանը աղէկ բան մը խորհեցաւ : Ներս բերաւ մայր փղը, անոր ցուցուց վերքը և վիրաբայժի, և քանի մը նշաններով հասկցուց թէ ինչ կ'ուզ



ՉԻՆԱԳՆՏԱԿԻ ՌԱԸ

աղայ պէտք չէր Սատանային յանձնել, եթէ ինք կրնար արգելել զայդ : Վազեց զնայ ծերունի կնոջ քով, որ տակաւին գաւազանի հարուածներ կու տար աղային իւր բոլոր ուժովը, և բռնելով անոր բազուկէն, ըսաւ, «Թող սուր աղան, թող սուր : Սատանան չկրնար հոս գալ ճիշդ հիմա, նա այժմ կուռոյ մէջ է խողի մը հետ դիմացի մարգագետինին վրայ : Ես եկեղեցի պիտի տանիմ աղան և դնեմ ամպիոնին վրայ : Մենք այս աշխարհին բոլոր բարի բաները չենք տար Սատանային :»

Իւր բազկաց մէջ առաւ աղան որ կը հեկեկար և միանգամայն կը զարմանար . քիչ չէր նաև կնոջ զարմանքը որ կեցեր էր քար կորած և սարսափած : Տր. Մաք Լաուտ վար դրաւ աղան եկեղեցւոյ դրան առջև, քալեցուց զնա ներս և հանեց վեր ամպիոնին սանդուղէն : Ամպիոնին վրայ չէր գտնուէր նստարան, ուստի փոքրիկը նստաւ տախտակամածին վրայ շատ հանդարտ, խաղաղով երգարանի

ուէր իրմէ : Խսկոյն գնաց սա ահա բեկեալ ձագին քով, փափկութեամբ փակթեց իւր պատիճն (հանգ) անոր շուրջը, և ամուր մը բռնեց զնա հակառակ անոր աղաղակներուն և ճիչերուն, մինչև որ վիրաբայժը ժամանակ ունեցաւ կատարել իւր գործը : Յաջորդ օրն ևս բրաւ նոյն օգնութիւնը, նաև միւս օրը, և այսպէս ամէն օր այնուհետև, մինչև որ բուժումը կատարեալ եղաւ : Մայրական հանճարի այս փոքրիկ հանդէսը դիտողք արժան համարեցան յիշել և արձանագրել զայն :

Ամերիկայի Մեթոդիկ ընդհանուր կողմէն,  
Արտադրող Ք. ԿՐԻՆ  
Տնօրէն՝ ԳԱՐՆԼՄ  
Ֆինանսերը կ'ապահովուի իւր  
**ԿՈՍՏԱՆԵՐՈՒԳՈՒԼԻՍ**  
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՆՈՐ ԳՅՈՒՅՆՆԵՐ